

Հեղինե Հախվերդյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի
գիտաուսումնական կենտրոնի իրավաբան*

**ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋՎԱՅՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

Ժամանակակից աշխարհում տնտեսական զարգացման աճող տեմպերը և տարատեսակ բացասական ազդեցություններից շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտությունը պահանջում են մշակել այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնք, հիմնվելով տնտեսվարողների, հասարակության և պետության շահերի ներդաշնակեցման վրա, հնարավորություն կտան մեղմելու այդ ազդեցությունները և նվազագույնի հասցնելու պատճառովս վնասները: Էկոլոգիական ապահովագրության՝ որպես շրջակա միջավայրի պահպանության ֆինանսական գործիքի կիրառման շուրջ կենդարյա փորձն ապացուցել է դրա կենսունակությունը, ինչի վկայությունն են հատկապես ԱՄՆ-ում և Եվրոպական Միությունում կիրառվող էկոլոգիական ապահովագրության տարատեսակ մոդելները և դրանց շրջանակներում առաջարկվող ապահովագրական փաթեթները:

Էկոլոգիական ապահովագրության ցանկացած մոդելի արդյունավետության առաջնային բնութագրիչները շրջակա միջավայրին պատճառված վնասի դեպքում տրամադրվող ապահովագրական հատուցման ցուցանիշներն են՝ հատուցված գումարի համապատասխանությունը պատճառված վնասի փաստացի չափին (ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի¹ սահմաններում²),

¹ ՀՀ քաղ. օր. 983¹ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Ապահովագրական գումարն ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափն է»:

² Էկոլոգիական ապահովագրության զարգացած համակարգ ունեցող մի շարք երկրներում ապահովագրական գումարի չափը որոշվում է կողմերի համաձայնությամբ: Ապահովագրական ծածկույթը կարող է ընդգրկել տնտեսվարողի պատասխանատվության միայն մի մասը, օր.՝ ջրային ռեսուրսների աղտոտման դեպքում պատճառված վնասի հատուցումը:

հատուցման ժամկետները և հասցեականությունը: Որպես լրացուցիչ բնութագրիչներ հանդես են գալիս էկոլոգիական ապահովագրության կանխարգելիչ գործառույթի իրացման մակարդակը (գնահատվում է մաթեմատիկական, վիճակագրական և այլ մեթոդներով ինստիտուտի տևական գործառնման ընթացքում), ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրական սակագնի¹ համարժեքությունը և էկոլոգիական ռիսկերի կառավարման տեղեկատվական ու ֆինանսական գործիքների համադրումը:

Երկրորդ խումբ բնութագրիչները կազմում են էկոլոգիական ապահովագրական հարաբերությունների ներքին կողմը և ապահովագրական հատուցում տրամադրելու հարաբերություններում անմիջականորեն չեն դրսևորվում: Նշված հատկանիշների վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման և էկոլոգիական ապահովագրության ինստիտուտների ընդհանուր հիմքերը, բացատրել այդ ինստիտուտների զարգացման օրինաչափությունները և ուրվագծել հիշյալ ոլորտներում ՀՀ օրենսդրության կատարելագործման ուղղությունները՝ հաշվի առնելով ԵՄ-ում գործող իրավական կարգավորումը և պրակտիկան:

Չնայած էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի տարատեսակ բնորոշումներին՝ գրեթե բոլոր հեղինակներն ընդունում են այն մոտեցումը, որ լինելով բնօգտագործման կարգավորման տնտեսական մեխանիզմի բաղադրիչ՝ էկոլոգիական ապահովագրությունը հիմնվում է կողմերի փոխադարձ շահերի վրա, երբ ռացիոնալ բնօգտագործման խնդիրը լուծվում է մի կողմից աղտոտողի տնտեսական նպատակների, մյուս կողմից՝ հասարակության շահերի հավասարակշռման ճանապարհով²: Այսինքն՝ էկոլոգիական ապահովագրությունը հանդես է գալիս որպես էկոլոգիական վնասի հատուցման արտաբյուջետային գործիք, որը թույլ է տալիս կատարել ռիսկերի հիմնավորված վերաբաշխում ապահովադրի, ապահովագրողի և վերաապահովագրողի միջև: Սկսած 2000 թվականից՝ էկոլոգիական ապահովագրությունն ընկալվում է լայն իմաստով, այդպիսով համարվելով գործունեություն, որն ուղղված է տնտես-

¹ ՀՀ քաղ. օր. 983¹ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Ապահովագրական սակագինը սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափն է»:

² Տե՛ս **Михайлович С.С.** Экономические интересы субъектов экологического страхования. Автореферат ... кандидата экономических наук. М.: 2003, էջ 5:

վարման, բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ու լորտներում էկոլոգիական ռիսկերից ապահովագրական պաշտպանության համակարգի ձևավորմանը¹:

Էկոլոգիական ապահովագրությունը՝ որպես պատասխանատվության ապահովագրության տեսակ, ձևավորվել և զարգացել է շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ինստիտուտի կատարելագործման արդյունքում: Այդ մասին է վկայում ԵՄ էկոլոգիական օրենսդրության զարգացման ժամանակագրությունը: Նշված օրինաչափությունը որոշակի առանձնահատկություններով դրսևորվել է նաև ԱՄՆ-ում, որտեղ ուղղորդող լուրջ ազդեցություն է ունեցել դատական պրակտիկան:

Այսպես, ԵՄ-ում շրջակա միջավայրին պատճառված վնասի, ինչպես նաև դրանով պայմանավորված մարդկանց կյանքին և առողջությանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքին պատճառված վնասների հատուցման ինստիտուտի կանոնակարգման հարցում շրջադարձային էր Եվրոպական հանձնաժողովի կողմից «Էկոլոգիական պատասխանատվության»² մասին սպիտակ փաստաթղթի³ («White Paper») ընդունումը: Այն համակարգային նշանակություն ունեցավ՝ սահմանելով ԵՄ տարածքում էկոլոգիական պատասխանատվության ընդհանուր ռեժիմի հայեցակարգը, որի հիմքում դրված էին էկոլոգիական իրավունքի «աղտոտողը վճարում է» և «կանխարգելման» սկզբունքները⁴: Փաստաթուղթը տարբերակում էր նաև շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության արդյունքում պատճառված վնասների երկու խումբ՝ էկոլոգիական վնաս (շրջակա միջավայրի աղտոտում և կենսաբազմազա-

¹ Տե՛ս www.aecos.ru

² «Էկոլոգիական պատասխանատվություն» եզրույթը գործածում է նաև ռուս հեղինակ Վ.Վ.Պետրովը (տե՛ս **Петров В.В.** Экологическое право России. Учебник. М.: «БЭК», 1995, էջ 237): Մեր համոզմամբ այդ եզրույթը բավականին անորոշ է, առանձնահատուկ բովանդակային և իրավական ծանրաբեռնվածություն չի կրում և որպես կարճ տարբերակ՝ կարող է փոխարինել «էկոլոգիական օրենսդրության խախտման համար կիրառվող պատասխանատվություն» արտահայտությանը:

³ Տե՛ս COM(2000) 66 final. 09.02.2000:

⁴ «Աղտոտողը վճարում է» և «կանխարգելման» սկզբունքներն էկոլոգիական իրավունքի ճյուղային սկզբունքներից են: «Աղտոտողը վճարում է» սկզբունքն առաջին անգամ հիշատակվել է «Բարթիկ ծովի ավազանի պահպանության մասին» 1992թ. Հելսինկյան կոմվենցիայում, իսկ «կանխարգելման» սկզբունքն ամրագրված է 1972թ. Ստոկհոլմի Սկզբունքների հռչակագրում:

նությանը պատճառված վնասներ, ինչը կարող է դրսևորվել շրջակա միջավայրի բաղադրիչների որակական և քանակական հատկությունների վատթարացման կամ կորստի ձևով) և ավանդական վնասներ (առողջությանը և գույքին պատճառված վնասներ):

.Էկոլոգիական պատասխանատվության մասին սպիտակ փաստաթղթին հաջորդեց .Շրջակա միջավայրին պատճառված վնասի կանխարգելման և հատուցման առնչությամբ Էկոլոգիական պատասխանատվության մասին Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվի ընդունումը (2004/35/EC)¹, որը վերջին տարիներին ընդունված շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ամենաընդգրկուն իրավական ակտն է և արտացոլում է .Էկոլոգիական պատասխանատվության մասին սպիտակ փաստաթղթի սկզբունքային մոտեցումները: Դրա հիմքում ընկած են ԵՄ տարբեր մարմինների 18 դիրեկտիվների և ավելի քան տասը միջազգային համաձայնագրերի դրույթներ²: Փաստաթղթի հիմնական նպատակն է պարտավորեցնել տնտեսվարողներին իրականացնելու կանխարգելիչ միջոցառումներ Էկոլոգիական ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ, իսկ վնաս պատճառելու դեպքում տրամադրել համապատասխան հատուցում: Հատկանշական է, որ դիրեկտիվը սահմանում է պատասխանատվության երկու տարբեր ռեժիմներ՝ հիմք ընդունելով տնտեսվարողի կողմից իրականացվող գործունեության ռիսկայնությունը.

(1) տնտեսվարողը (օպերատորը), որի գործունեությունը համարվում է պոտենցիալ կամ իրական վտանգավոր³, պարտավոր է հատուցել շրջակա միջավայրին պատճառված վնասները՝ անկախ իրավախախտման առկայության փաստից.

(2) մյուս բոլոր տնտեսվարողները (բացի պոտենցիալ կամ իրական վտանգավոր գործունեություն իրականացնողներից) պարտավոր են հատուցել շրջակա միջավայրին պատճառված վնասները, եթե դրանք վրա

¹ Տե՛ս OJ L 143, 30.4.2004, էջ 56–75:

² Տե՛ս Гармонизация экологических стандартов II. Заключительный технический отчет: Экологическая ответственность и экологическое страхование. Под ред. Хан Д., Москва. 2009, էջ 14:

³ Պոտենցիալ կամ իրական վտանգավոր գործունեության տեսակների ցանկը սահմանված է «Աղտոտումների համալիր կանխարգելման և վերահսկողության մասին» դիրեկտիվի (2008/1/EC) (OJ L 24, 29.1.2008, էջ 8–29) 3-րդ հավելվածում:

են հասել վերջիններս դիտավորության կամ անգուշության (անվտուրության) հետևանքով:

Հիշյալ դիրեկտիվի ընդունմամբ հիմք դրվեց շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման արդյունավետ և կառավարելի համակարգի զարգացման համար: Պատասխանատվության ռեժիմի տարբերակումն ըստ օպերատորների ռիսկայնության հնարավորություն ստեղծեց, որ համարժեքորեն զարգանա ֆինանսական երաշխիքների, այդ թվում՝ էկոլոգիական ապահովագրության համակարգը¹: Կարևոր է ընդգծել, որ դիրեկտիվը օպերատորներին ուղղակիորեն չի պարտավորեցնում ներկայացնելու ֆինանսական երաշխիքներ կամ ապահովագրելու քաղաքացիաիրավական պատասխանատվությունը շրջակա միջավայրին պատճառված վնասի համար: Դրա հետ մեկտեղ փաստաթուղթը չի սահմանափակում շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման վերին շեմը, այսինքն՝ դիրեկտիվը հիմնվում է վնասների լրիվ չափով հատուցման սկզբունքի վրա: Կարծում ենք, որ նման մոտեցումը նպաստում է մի կողմից տնտեսվարողների օբյեկտիվ պահանջի ձևավորմանը՝ օգտվելու էկոլոգիական ռիսկերի ապահովագրության և շրջակա միջավայրի պահպանության այլ ֆինանսական գործիքներից, մյուս կողմից՝ ֆինանսական ծառայությունների շուկայի զարգացմանը:

ԵՄ երկրորդային օրենսդրությամբ շրջակա միջավայրին պատճառված վնասների հատուցման ինստիտուտի կանոնակարգմանը հետևեց շուկայի արձագանքը. ընդհանուր քաղաքացիաիրավական պատասխանատվության ապահովագրության փաթեթներից (ներառում էին նաև շրջակա միջավայրին վնաս պատճառելու դեպքում գույքային պատասխանատվության ապահովագրությունը) առանձնացան տարբեր ոլորտներում գործող տնտեսվարողների շահերին հարմարեցված ապահովագրական փաթեթներ: Դրանցում արդեն էկոլոգիական ռիսկերի ֆինանսավորման ու դրանք ապահովագրողին փոխանցելու բաղադրիչները գույքորոշում են ռիսկերի արդյունավետ կառավարման գործիքներով²:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով շրջակա միջավայրին պատճառված վնասների հատուցման և էկոլոգիական ապահովագրու-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 14:

² Տե՛ս **James W. Broderick, Daniel R. Lavoie, Andrew J. Perel.** Environmental Risk Management and the Role of Environmental Insurance // Environmental Quality Management. Autumn 2000, էջ 3:

յան ինստիտուտների հարաբերակցությանը՝ անհրաժեշտ ենք համարում այն քննարկել էկոլոգիական ապահովագրության արդյունավետության գնահատման ցուցանիշների մակարդակում, ինչը թույլ կտա վեր հանել այդ ինստիտուտների կապը բնութագրող մասնավոր հատկանիշները:

Ապահովագրական հատուցման և պատճառված վնասի համարժեքությունը: Շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման իրավական մեխանիզմների կատարելագործումը ենթադրում է վնասի՝ հնարավորինս ամբողջական և օբյեկտիվ տնտեսական գնահատման եղանակների մշակում, ինչպես նաև վնասի հատուցման իրավական կառուցակարգերի սահմանում, որոնք կինտեգրվեն առկա շուկայական հարաբերությունների համակարգում: Այսօր էկոլոգիական վնասի հատուցման հետ կապված հիմնական խնդիրն այն է, որ գիտությունը և պրակտիկան, որպես կանոն, անգոր են որոշելու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության դեպքում առաջացող վնասի իրական չափը: Այդ իսկ պատճառով կիրառվում են սակագների և վնասների հաշվարկի տարբեր եղանակների վրա հիմնված էկոլոգիական վնասի գնահատման պայմանական մեթոդներ¹: Վնասների գնահատման միասնական մեթոդիկայի բացակայությունը գործնականում լուրջ խնդիրների է հանգեցնում: Ընդ որում, եթե վնասների հատուցման արտասպայմանագրային պարտավորություններ ծագելու դեպքում գնահատվում են արդեն իսկ առկա վնասները, ապահովագրական հարաբերությունների շրջանակներում կատարվում է նախ՝ հնարավոր վնասների (ռիսկերի), իսկ բացասական ազդեցության դեպքում՝ նաև փաստացի վնասի գնահատում: Ռիսկերի գնահատումը կատարվում է դրանց ապահովագրելիությունը (*insurability*) որոշելու, ապահովագրական գումարը և ապահովագրավճարը սահմանելու համար: Որպես կանոն, ապահովագրական գումարը էկոլոգիական ապահովագրության տարբեր պոլիսներում տատանվում է 5-70 մլն. ԱՄՆ դոլարի սահմաններում, ուստի ապահովագրողները բավականին լուրջ են մտտենում ռիսկերի գնահատման խնդրին և ապահովադիրներից պահանջում են սպառիչ տեղեկատվություն վերջիններիս գործունեության առնվազն հետևյալ բնութագրիչների վերաբերյալ՝ ար-

¹ Տե՛ս **Мисник Г.А.**, Правовые формы возмещения экологического вреда // Государство и право. 2006. N7, էջ 48:

տաղրության անվտանգության մակարդակը, շրջակա բնական միջավայրի վիճակը և նկարագրությունը, ռիսկայնության վրա ազդող այլ գործոններ¹: Երբեմն, սակայն, մեթոդաբանական անկատարության պատճառով ռիսկերի նախնական գնահատման և առաջացած վնասի գնահատման արդյունքներն էականորեն տարբերվում են², ինչն իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ ինչպես ապահովադրի և ապահովագրողի, այնպես էլ պետության և հասարակության շահերի վրա: Սկզբունքային նշանակություն ունի այն, որ և՛ վնասների հատուցման արտապայմանագրային հարաբերություններում և՛ ապահովագրական հարաբերություններում կիրառվեն վնասների հաշվարկման և գնահատման միևնույն մեթոդները: Դա թույլ կտա անբարեխիղճ մրցակցությունից ապահովագրական ծառայությունների շուկան պաշտպանել:

Այսպիսով, շրջակա միջավայրին պատճառված վնասի համարժեք գնահատումը հավասարապես կարևորվում է ինչպես շրջակա միջավայրին վնաս պատճառելուց ծագող արտապայմանագրային հարաբերությունների, այնպես էլ ապահովագրական հարաբերությունների համատեքստում: Այս իմաստով ապահովագրական հարաբերություններն ,ածանցյալ ենե վնասների հատուցման արտապայմանագրային հարաբերություններից: Էկոլոգիական ռիսկերի ապահովագրության դեպքում ապահովադիրը հատուցման դիմաց պատասխանատվության իր ռիսկը փոխանցում է մասնագիտացված ընկերությանը, սակայն վնասների գնահատման և հատուցման հիմնական սկզբունքները շարունակում են գործել՝ ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի և մյուս պայմանների շրջանակներում:

Ապահովագրական հատուցման ժամկետները: Ի տարբերություն ապահովագրության մյուս տեսակների, որոնց դեպքում վնասների չափի հաշվարկը առանձնակի բարդություն չի ներկայացնում, և ապահովագրական հատուցումը տրամադրվում է, որպես կանոն, ամրագրված ժամկետներում, Էկոլոգիական ապահովագրության պարագայում գործում է

¹ Տե՛ս **Шинкаренко И.Е.**, Страхование ответственности: справочник. 2-е изд., испр. и доп. – М.: Аникл, 2006, էջ 295-296:

² Տե՛ս Marrs, S.D. 1991. Pollution exclusion clauses: Validity and applicability. Tort & Ins. L.J. N26, էջ 662- 663:

հնարավորինս սեղմ ժամկետում հատուցում տրամադրելու սկզբունքը¹: Դա բացատրվում է նրանով, որ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության հետևանքով կարող է վնաս պատճառվել ոչ միայն պետությանը, այլ նաև քաղաքացիների կյանքին և առողջությանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքին: Ուստի նախքան հատուցում տրամադրելը անհրաժեշտություն է առաջանում նախ որոշել այն սուբյեկտների շրջանակը, որոնց վնաս է պատճառվել, ըստ սուբյեկտների գնահատել պատճառված վնասի չափը, այնուհետև ըստ շահառուների հերթերի բաշխել ապահովագրական հատուցման համար նախատեսված գումարը²: Շրջակա միջավայրին վնաս պատճառելուց ծագող արտապայմանագրային հարաբերություններում ևս ԵՄ օրենսդրությունը վնասների հատուցման հստակ ժամկետ չի սահմանել: Հատկանշական է, որ ապահովագրական հատուցում տրամադրելու ժամկետներ սահմանված չեն նաև .Էկոլոգիական ապահովագրության մասին ԱՊՀ մոդելային օրենքում³: Բացարձակ անորոշության վիճակից խուսափելու համար ԵՄ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվում են միայն ապահովագրական դեպքից հետո պահանջներ ներկայացնելու ժամկետները, որոնք ըստ պետությունների և պահանջի բնույթի՝ խիստ տարբերվում են (30 օրից – 2 տարի գույքային պահանջների համար և առանց ժամկետի սահմանափակման՝ առողջությանը պատճառված վնասի համար)⁴:

Ժամկետների իմաստով էկոլոգիական վնասի հատուցման և էկոլոգիական ապահովագրության ինստիտուտներին միավորում է դրանց անորոշությունը: Սակայն եթե խնդրին մոտենանք շահառուների դիրքերից

¹ Հնարավորինս սեղմ ժամկետում հատուցում տրամադրելու սկզբունքն առաջին հայացքից կարող է ընկալվել որպես շահառուների իրավունքները խախտելու միտում: Այս առումով կարևոր է պատշաճ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև ապահովագրողների կողմից հատուցում տրամադրելու սեղմ ժամկետների սահմանումը (ամրագրվում է ապահովագրական պայմանագրում): Ապահովագրողների կողմից նման մոտեցման դրսևորումը (տմտեսապես արդարացված լինելու դեպքում) կարող է առավել գրավիչ դարձնել նրանց առաջարկված ծառայությունները:

² St'u M. **Hinteregger**, Environmental Liability and Ecological Damage in European Law. Cambridge University Press. 2008, էջ 161:

³ Ընդունվել է 15.11.2003թ., ուժի մեջ է մտել 20.11.2006թ., N22-19:

⁴ St'u A Guide to Environmental Liability in Europe. The ACE Group of Insurance and Reinsurance Companies. 2011, էջ 6-14:

և ցանկալի արդյունքի ակնկալիքով, ապա վերջիններին համար էական նշանակություն չունի, թե ինչ աղբյուրից է հատուցվում պատճառված վնասը՝ ապահովագրական հիմնադրամի՞ց, թե՞ վնաս պատճառողի սեփական միջոցներից: Չհավակնելով միանշանակ եզրահանգման, կարծում ենք, որ ապահովագրական պատահարից հետո վնասների հատուցման ընթացակարգը պետք է կազմակերպվի հնարավորինս կարճատև փուլերով, ինչը թույլ կտա ըստ շահառուների պահանջների առաջնահերթության՝ բավարարել դրանք և արդեն իսկ հաշվարկված և ճշգրտված վնասների հատուցումը չպայմանավորել ապագայում ներկայացվելիք պահանջներով, քանի որ նման դեպքերում կարող են բազմաթիվ կենսական շահեր վտանգվել: Տեսականորեն հնարավոր է, որ էկոլոգիական ապահովագրության հարաբերությունների բացակայության դեպքում վնաս պատճառողին ներկայացված պահանջներն առավել սեղմ ժամկետում բավարարվեն, սակայն այստեղ անհամեմատ մեծ է վտանգը, որ ներկայացված պահանջները գումարային առումով գերազանցեն տնտեսվարողի ակտիվները:

Ապահովագրական հատուցման հասցեականությունը: Այս բնութագրիչը կազմում է վնասների հատուցման ինստիտուտի հիմքը, որի շուրջ, ըստ էության, ձևավորվել են շրջակա միջավայրի պահպանության բոլոր ֆինանսական գործիքները՝ նպատակ ունենալով երաշխավորել վնաս կրած սուբյեկտի իրավունքների արդյունավետ վերականգնումը: Էկոլոգիական ապահովագրության պարագայում հատուցման հասցեականության մասին խոսելիս անպայման պետք է նկատի ունենալ նաև այն իրավական միջոցները, որոնք թույլ են տալիս ապահովել հասցեականությունը¹: Այստեղ առաջին հերթին խոսքը գնում է վնաս կրած սուբյեկտների անհատականացման և այդ նպատակով կիրառվող իրազեկման, արձագանքման և օպերատիվ մոնիթորինգի համակարգերի ներդրման մասին, որոնք ուղղված են նաև օժանդակելու վնասների հաշվարկման աշխատանքներին և նվազագույնի հասցնելու հատուցում տրամադրելու ժամկետները:

Էկոլոգիական ապահովագրության կանխարգելիչ գործառույթը: Հանդես գալով որպես էկոլոգիական պատասխանատվության հարաբե-

¹ St' u Environmental Risks and Insurance. A comparative Analysis of the Role of Insurance in the Management of Environment-Related Risks. Policy Issues and Insurance N6. OECD. 2003, էջ 41:

րությունները միջնորդավորող առաջադեմ կառուցակարգ՝ էկոլոգիական ապահովագրությունն իր բովանդակության մեջ խտացրել է էկոլոգիական պատասխանատվության կանխարգելիչ գործառույթը¹ (բնորոշ է բոլոր մոդելներին)՝ այն հարստացնելով ապահովադրի համար տնտեսական գրավչությամբ: Կախված ապահովագրական ծածկույթի չափից և իրականացվող գործունեության տեսակից ու մասշտաբներից՝ էկոլոգիական ապահովագրության պայմանագրով ապահովադրի վրա դրվում են որոշակի կանխարգելիչ բնապահպանական միջոցառումներ իրականացնելու պարտականություններ, որոնց պատշաճ կատարումը, հետևաբար և ռիսկերի կրճատումը թույլ են տալիս նվազեցնել ապահովագրական սակագինը կամ ձեռք բերել որոշակի հարկային կամ վարկային արտոնություններ:

Այսպիսով, իրավական պատասխանատվությանը բնորոշ կանխարգելիչ պրևենտիվե գործառույթը էկոլոգիական ապահովագրության կառուցակարգում որակական մոր հատկանիշ է ձեռք բերում՝ դառնալով տնտեսավարողին խրախուսելու արդյունավետ գործիք:

Ապահովագրական գումարի և ապահովագրական սակագնի համարժեքությունը: Այս բնութագրիչը ևս սերտորեն առնչվում է էկոլոգիական ռիսկերի գնահատման մեթոդիկայի հետ: Որքան զարգացած է ռիսկերի գնահատման մեթոդիկան, և որքան իրականին մոտ են ստացված արդյունքները, այնքան ավելի բարձր է հավանականությունը երկարաժամկետ հեռանկարում երաշխավորելու ապահովադրի, ապահովագրողի, շահառուների և պետության շահերը: Հարկ է նշել, սակայն, որ հանգամանորեն մշակված մեթոդիկայի առկայությունը դեռևս բավարար չէ նշված գործառույթը պատշաճ իրականացնելու համար, պահանջվում է նաև համապատասխան նյութատեխնիկական բազա և լուրջ մասնագիտական ներուժ:

Ապահովագրական գումարին համարժեք ապահովագրական սակագին սահմանելը կարևոր պայման է, որ տնտեսավարողները կամավոր նմտություն կատարեն էկոլոգիական ապահովագրության օգտին, ինչը էապես կարող է բարելավել վերաբերմունքն այդ ինստիտուտի նկատ-

¹ St' u Green Financial Products and Services. Current Trends and Future Opportunities in North America. A report of the North American Task Force (NATF) of the United Nations Environment Programme Finance Initiative. August 2007, էջ 36:

մամբ (հատկապես հետխորհրդային պետություններում էկոլոգիական ապահովագրությունն ընկալվում է որպես տնտեսվարողի համար ավելորդ ֆինանսական բեռ): Վերոգրյալ պայմանի բավարարումը այն ճանապարհներից մեկն է, որը շրջակա միջավայրին պատճառով վնասների հատուցման ավանդական եղանակը կարող է սահուն փոխարինել ավելի առաջադիմականով:

Էկոլոգիական ռիսկերի կառավարման տեղեկատվական և ֆինանսական գործիքների համադրումը: Վնաս պատճառելու դեպքում, անկախ նրանից, թե ում է պատճառվել և ինչպես է այն արտահայտվել, բացասական ազդեցությունները, որպես կանոն, չեն կարող չեզոքացվել որևէ մեկ իրավական ինստիտուտի շրջանակներում (օրինակ՝ ապահովագրության կամ վնասների հատուցման): Առավելագույն սոցիալական էֆեկտ ստանալու համար անհրաժեշտ է տարբեր իրավական միջոցների խելամիտ համադրություն¹: Էկոլոգիական ապահովագրության շրջանակներում ռիսկերի կառավարման տարատեսակ գործիքների կիրառությունը՝ որպես կանխարգելիչ գործառույթի մաս, թույլ է տալիս փոխշահավետ համագործակցության դաշտ ձևավորել ապահովարողի և ապահովագրողի միջև: Որպես կարևոր տեղեկատվական գործիքներ՝ հանդես են գալիս *Էկոլոգիական ատլիտը*, որն իրականացվում է ապահովագրողի կողմից նախքան ապահովագրական պայմանագրի կնքումը և դրանից հետո որոշակի պարբերականությամբ, և *ինքնահսկումը*, որն իրականացնում է տնտեսվարողը սեփական արտադրական գործընթացի նկատմամբ: Չուգահեռաբար կիրառվող ֆինանսական գործիքներ են հարկային և վարկային արտոնությունները, սուբսիդավորումը, որոնց համալիրը կարող է բարձրացնել տնտեսվարող սուբյեկտի մրցունակությունը շուկայում:

Շրջակա միջավայրին պատճառով վնասի հատուցման դասական կառուցակարգում ռիսկերի կառավարումը խիստ սահմանափակ է և ոչ շարունակական: Որպես կանոն, պետություն-տնտեսվարող համագործակցությունը սկսվում և ավարտվում է առանձին թույլտվությունների ստացման շրջանակում լիազոր մարմնին որոշակի տեղեկատվություն ներկայացնելով, իսկ գործունեության իրականացման ընթացքում դրա այս կամ այն կողմին վերաբերող հաշվետվությունների ներկայացմամբ:

¹ См и Гражданское право. Учебник. Ч. II. Под. ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. М., 1997, էջ 694-695:

Դրանք, սակայն, Էկոլոգիական ռիսկերի արդյունավետ կառավարման տեսանկյունից բավարար չեն:

Շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության ընդհանուր նկարագիրը: ՀՀ գործող օրենսդրության համակարգում Էկոլոգիական ռիսկերի բազմակողմանի գնահատման հնարավորություն ընձեռող իրավական շրջանակ նախատեսված չէ: Իհարկե, պրակտիկայում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում իրականացնելիս մասնագետներն անհրաժեշտաբար գնահատում են նախատեսվող տնտեսական գործունեության այս կամ այն տեսակի Էկոլոգիական ռիսկերը, սակայն վնասների հատուցման հարաբերություններ ծագելու դեպքում այդ հաշվարկները վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից չեն ընդունվում որպես հիմք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹ 60-րդ գլխի («Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ») մի շարք դրույթներ սահմանում են վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների ընդհանուր հիմքերը, մասնավորապես՝ ամրագրում են վնաս պատճառած անձի կողմից վնասը լրիվ ծավալով հատուցելու և առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի դեպքում առանց մեղքի պատասխանատվության սկզբունքները: Այդուհանդերձ, հաճախ վնասի չափը հաշվարկելու հստակ մեթոդիկայի և եղանակների բացակայությունը լուրջ խոչընդոտներ է ստեղծում մարդու իրավունքների պաշտպանության և պետությանը պատճառված վնասի վերականգնման առումով²:

Ինչ վերաբերում է պատճառված վնասի հաշվարկման եղանակներին, ապա որպես եզակի օրինակ՝ պետք է հիշատակել «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքը³, որը սահմանում է կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները, դրա հաշվարկման և գանձ-

¹ Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

² Տե՛ս **Հայավերդյան Հ.,** Էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի ներդրման իրավական խնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Գատական իշխանություն, 2010 6(131), էջ 50:

³ Ընդունվել է 03.05.2005թ., ուժի մեջ է մտել 18.06.2005թ., ՀՀՊՏ 2005.06.08/35(407):

ման կարգը: ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 91-Ն¹ և 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 965-Ն² որոշումներով համապատասխանաբար հաստատվել են Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը և ՀՀ տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների էկոլոգիական անվտանգության տեխնիկական կանոնակարգը, որոնք, սակայն, ազդեցությունների չեն շոշափում դրամական գնահատման հարցերը: Մյուս բնական ռեսուրսների մասով կորուստների հաշվարկման եղանակները որևէ իրավական ակտում ամրագրված չեն:

Վերոգրյալի հիման վրա կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում էկոլոգիական վնասի փոխհատուցման առանձնահատուկ կարգավորում չի գործում, իսկ քաղաքացիաիրավական պատասխանատվության ընդհանուր կանոնները չեն կարող և չեն ապահովում շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման արդյունավետությունը:

«Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ³ նախատեսվում է մինչև 2012 թվականն ընդունել օրենք «Պարտադիր էկոլոգիական ապահովագրության մասին», սակայն ներկայիս իրավիճակը ստիպում է թերահավատությամբ վերաբերվել կառավարության ծրագրին, քանզի առ այսօր որևէ գործնական քայլ այդ ուղղությամբ չի ձեռնարկվել:

Այսպիսով, էկոլոգիական ապահովագրության և շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ինստիտուտների հարաբերակցության վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի զարգացումն անմիջականորեն պայմանավորված է շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ինստիտուտի կատարելագործմամբ: Եթե բացակայում են կամ համարժեք կարգավորված չեն ռիսկերի գնահատման և վնասների հաշվարկման մեթոդները, սահմանված չեն վնասների հատուցման գործուն մեխանիզմներ, էկոլոգիական ապահովագրության նույնիսկ կատարյալ համակարգը դառնում է առարկայազուրկ, քանի որ խարխլվում է միջոցները նպատակին միացնող կամուրջը: Եթե շրջակա միջավայրին պատ-

¹ Ընդունվել է 25.01.2005թ., ուժի մեջ է մտել 05.03.2005թ., ՀՀ ՊՏ 2005.02.23/ 14(386):

² Ընդունվել է 22.06.2006թ., ուժի մեջ է մտել 02.02.2007թ., ՀՀ ՊՏ 2006.08.02/41(496):

³ Ընդունվել է 14.08.2008թ., ուժի մեջ է մտել 01.01.2009թ., չի հրապարակվել:

ճառված վնասի հատուցման ինստիտուտի թերի իրավական կարգավորվածությունը տնտեսվարողներին հնարավորություն է տալիս խուսափելու վնասը լրիվ չափով հատուցելուց. էկոլոգիական ռիսկերի ապահովագրությունը վերջիններիս համար դառնում է անցանկալի ֆինանսական բեռն: Ուստի միանշանակ կարելի է փաստել, որ շրջակա միջավայրին պատճառված վնասների հատուցման ինստիտուտի ներդաշնակ իրավական կարգավորումն այն ուղին է, որը տանում է դեպի էկոլոգիական անվտանգության ապահովման որակապես նոր մակարդակ:

Heghine Hakhverdyan

PHD student at the Chair of Civil Procedure, YSU

SOME ISSUES OF RELATIONSHIP BETWEEN INSTITUTIONS OF ENVIRONMENTAL INSURANCE AND COMPENSATION OF ENVIRONMENTAL DAMAGE

In the present article relationship between institutions of environmental insurance and compensation of environmental damage is considered in the context of main characteristics of efficiency of environmental insurance – accordance of insurance compensation with the damage cost, terms of compensation, addressability, level of realization of preventive function, adequacy of insurance compensation with insurance rates, combination of information and financial tools of environmental risk management. Discourse on relationship of these institutions is built on the approach that adequate legal regulation of compensation of environmental damage is a cornerstone for elaboration of precise and complex system of environmental insurance. The direct links and interaction between the institution of compensation of environmental damage and mentioned characteristics are revealed and described. On the basis of analysis of approaches in scientific sources, as well as international legislation and practice in the sphere of environmental insurance, relevant provisions of national legislation on compensation of environmental damage, necessity of special regulation of environmental damage compensation is substantiated.